



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ ԵՒ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳ՝ ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ՍՄԲԱՏ ԱՐՔ. ԼԱՓԱՃԵԱՆԻ

Այսու կը հաղորդենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ հոգելոյս Տ. Սմբատ Արք. Լափաճեանի վերջին օծումն ու թաղման կարգը տեղի պիտի ունենան Երկուշաբթի, 26 Յուլիս 2010, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ, թաղման կարգի արարողութեան պիտի հանդիսապետէ եւ վերջին օծումը պիտի կատարէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսան:

Ս. Պատարագ կ.ա ժամը 10:30

Վերջին օծում կ.ա ժամը 11

Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի յատուկ արտօնութեամբ, եւ համաձայն հոգելոյս Սրբազանին փափաքին, թաղումը պիտի կատարուի Ս. Խաչ Մայր Տաճարի շրջափակին մէջ, այն տաճարին՝ որուն յարկին տակ կերտուեցան անոր ծառայական գործունեութեան վերջին տասնամեակները:

Նախօրեակին, Կիրակի, 25 Յուլիսի երեկոյեան, Մայր Տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Տան Կարգը, երեկոյեան ժամը 7:30ին: Երեկոյեան ժամը 5էն 9, մեր ժողովուրդին առիթ պիտի տրուի վերջին յարգանք մատուցելու վախճանեալ Սրբազանին:

Յիշեալ արարողութեանց ու համապատասխան դասաւորումներուն համար, Առաջնորդ Սրբազանին գլխաւորութեամբ կազմուած է Թաղմանական Յատուկ Յանձնախումբ մը, որուն անդամներն են Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան, Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան, Տեարք Խաժակ Տիքիճեան, Լեւոն Կիրակոսեան եւ Տոբթ. Յակոբ Տիգրանեան:

Յայտնենք, որ վախճանեալ Սրբազանին յիշատակին, Ս. Խաչ Մայր Տաճարի հովանիին տակ պիտի հաստատուի «Սմբատ Արք. Լափաճեանի Յիշատակի Հիմնադրամ» մը, որ պիտի յատկացուի մեր Թեմին մէջ նոր քահանաներու պատրաստութեան:

Այսու կը հրաւիրենք մեր ժողովուրդը մասնակցելու յիշեալ արարողութեանց ու աղօթակից ըլլալու հոգելոյս Սրբազանի հոգւոյ խաղաղութեան համար:

EXTREME UNCTION AND FUNERAL SERVICES FOR ARCHBISHOP SUMBAT LAPAJIAN

We hereby announce to our faithful that the Extreme Unction and funeral services for Archbishop Sumbat Lapajian will be held on Monday, July 26th, 2010, at Holy Cross Cathedral in Montebello.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, which begins at 10:30 a.m., and will conduct the Extreme Unction at 11:00 a.m.

By the authorization of H.H. Catholicos Aram I, and per the wishes of the late Archbishop, the burial will take place in the courtyard of Holy Cross Cathedral.

The viewing will be held on Sunday, July 25th, from 5 to 9 p.m., with the wake service set to begin at 7:30 p.m.

An ad hoc memorial committee has been formed to oversee the details and arrangements of the funeral. The committee is headed by the Prelate and includes H.E. Archbishop Yeprem Tabakian, Very Rev. Fr. Muron Aznikian, Rev. Fr. Ashod Kambourian, Mr. Khajag Dikijian, Mr. Levon Kirakosian, and Dr. Hagop Dikranian.

In memory of the late Archbishop, the "Holy Cross Archbishop Sumbat Lapajian Memorial Fund" will be established, proceeds of which will be allocated to the new clergy preparation program of the Western Prelacy.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 25 Յուլիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. SARKIS CHUCH

On Sunday, July 25th, the Prelate will preside over Divine Liturgy at St. Sarkis Church in Pasadena, and will deliver the sermon.

**Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՅՈԳԵՒՈՐ ՅՈՎԻՒ
ԱՐԺ. Տ. ՅՐԱՆԴ ՔՅՆՅ. ԵՐԵՑԵԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԲ
ԱՄԳՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԻ**



Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Շաբաթ, 17 Յուլիս 2010, տօնն Էր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հիմնադիր առաքելներէն՝ Ս. Թադէոսի, որ Քրիստոսի 12 աշակերտներէն մէկն Էր: Առաքելաւր, ինչպէս նաեւ արքայադուստր Ս. Սանդուխտ Կոյս, եղան հայ եկեղեցւոյ առաջին նահատակները, որոնք

առաջին դարուն, մերժած Էին ուրանալ իրենց հաւատքը եւ Սանատրուկ արքայի կողմէ նահատակուեցան այլ հաւատացեալներու հետ:

Տօնին յաջորդող Կիրակիին, 18 Յուլիս 2010-ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցեց եւ քարոզեց Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ:

Նախ քան իր քարոզը, Առաջնորդ Սրբազան Հայրը եկեղեցւոյ մէջ համախմբուած բազմութեան յայտնեց, թէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ընդառաջելով իր եւ թեմիս կրօնական ժողովի խնդրանքին, Աւագութեան պատիւ եւ տիտղոս կը շնորհէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Յրանդ Քհնյ. Երեցեանին, առ ի գնահատանք Ամերիկայի Արեւելեան, Արեւմտեան եւ Քանադայի թեմերուն մէջ իր երկարամեայ ծառայութեան՝ ի սպաս Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ եւ մեր պատուական ժողովուրդին:

«Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ, Վեհափառ հայրապետին Սրբատառ Կոնդակը Ս. Խորան բերուեցաւ եւ յանձնուեցաւ Պատարագիչ Սրբազան Հօր, որ ընթերցեց ի լուր հաւատացելոց:

Ապա, Առաջնորդ Սրբազանը իր հայրական յորդորները փոխանցեց Տէր Հօր, թելադրելով հետեւիլ Քրիստոսի օրինակին եւ օրուան Աւետարանի պատգամէն մէջբերումներ կատարելով՝ պատուիրեց ըլլալ խոնարհ, նման Քրիստոսի կողմէ Աւետարանին մէջ յիշուած փոքրիկ մանուկին, կարենալ հասնելու համար իրաւ մեծութեան:

Շնորհակալական խօսք արտասանեց Տէր Հայրը, որ երախտագիտական իր զգացումները յայտնեց Վեհափառ Հայրապետին, Սրբազան Հօր եւ Կրօնական Ժողովին, զինք այս տիտղոսին արժանացուցած ըլլալուն համար, ապա, դիմելով եկեղեցւոյ մէջ համախմբուած բազմութեան, խնդրեց որ աղօթեն իրեն համար, որպէսզի

կարենայ դառնալ «Մշակ առանց ամօթոյ», Աստուծոյ եւ մեր ժողովուրդի ծառայական կեանքի անդաստանին մէջ:

Իսկ շաբաթավերջի տօնին ակնարկելով, Պատարագիչ Սրբազանը անդրադարձաւ Ս. Թադէոս Առաքելի Հայաստանի մէջ ունեցած գործունեութեան եւ առաքելութեան, ապա նաեւ նահատակութեան: Ան յիշեց նաեւ Սանդուխտ կոյսի նահատակութիւնը, վեր աստնելով քրիստոնէական հաւատքին մէջ հաստատ մնալու անոր կամքն ու զոհաբերումը: Սրբազան Հայրը պատգամեց մնալ հաւատարիմ մեր նախնեաց Առաքելական լոյս հաւատքին եւ ջանալ ամբողջ հոգիով նուիրուիլ մեր եկեղեցւոյ եւ մեր ազգային հաւաքական կեանքին:

Նախ քան Հոգեհանգստեան արարողութիւնը, Առաջնորդ Սրբազան Հայրը սրտի կսկիծով գուժեց Թեմիս նախկին առաջնորդներէն՝ Տ. Սմբատ Արք. Լափաճեանի վախճանումը, որ պատահած էր Շաբաթ, 17 Յուլիսին: Ան վեր առաւ հոգելոյս Սրբազանին արժանիքներն ու Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան ճամբով Հայ Եկեղեցւոյ եւ մեր ժողովուրդին մատուցած սպասաւորութիւնը, յատկապէս Արեւմտեան մեր թեմէն ներս:

PRELATE HONORS PASTOR OF FORTY MARTYRS CHURCH REV. FR. HRANT YERETZIAN WITH THE TITLE OF ARCHPRIEST



On Sunday, July 18th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy at Forty Martyrs Church in Orange County, during which he presented parish pastor Rev. Fr. Hrant Yeretian with a Pontifical Encyclical honoring him with the title of Archpriest.

Prior to delivering the sermon, the Prelate announced to the faithful that by his request and that of the Religious Council, H.H. Catholicos Aram I was honoring Fr. Hrant with the title of Archpriest for his years-long service within the Eastern and Western United States and Canada.

With the singing of a hymn, the Encyclical was brought to the altar and presented to the Prelate for him to read to the faithful. He then conveyed his fatherly blessings and guidance unto Fr. Hrant, and referencing the day's Scripture reading, encouraged him to

remain humble as the little ones as God and follow in the example of our Lord Savior Jesus Christ to serve with humility.

Fr. Hrant expressed his thanks and gratitude to His Holiness, the Prelate, and the Religious Council for the honor, and called on the faithful in attendance to pray for his continued service to the Armenian Church.

The Prelate's sermon focused on the day's feast, St. Thaddeus and St. Santookht. He described how after the Ascension of Jesus Christ the disciples went to different regions to preach and baptize unbelievers in the name of the Holy Trinity. He also spoke of how Jesus Christ had promised Armenia's King Abkar He would send one of His disciples to heal and enlighten him. St. Thaddeus arrived in Armenia where he began to preach and heal the sick, among them King Abkar, whom he also enlightened with the Christian faith.

Soon St. Thaddeus had many followers who had witnessed the miracles and healings he had performed in the name of Jesus Christ. Among those who had heard of his works was King Sanadrook's young daughter Santookht, who became a follower of St. Thaddeus. Witnessing her dedication to Jesus Christ and the Christian faith, St. Thaddeus baptizes Santookht, at which time a bright object shined the sky and came to rest on her. Many who witnessed this occurrence immediately became believers. The news soon reached King Sanadrook who ordered St. Thaddeus to be imprisoned and believers be put to death.

When King Sanadrook heard of his daughter's conversion, he tried to persuade her to renounce her new faith, however Santookht remained steadfast and chose to be martyred for Christ, thus becoming the first martyr and saint in Armenian history.

Using as an example the pious and virtuous lives of St. Thaddeus and St. Santookht, the Prelate called on the faithful to remain steadfast in their faith and devote themselves wholeheartedly to our faith and people to receive the heavenly kingdom promised by our Lord Savior.

At the start of the requiem service, the Prelate announced the sad news that a day earlier the first Prelate of the Western Prelacy Archbishop Sumbat Lapajian had entered eternal rest. He spoke of the late Archbishop's decades long service within the Catholicosate of Cilicia and the Western Prelacy, and asked the faithful to join in prayer for the repose of his soul.

The day's services concluded with the singing of the Cilician anthem, followed by the benediction by the Prelate.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԶԱՄԱՅՆՔԻ
ՅԻՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐԱՊԱՅԾԱՌ Տ. ՄԱՆՈՒԷԼ ԵՊՍԿ. ՊԱԹԱԳԵԱՆԻ
ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

Չորեքշաբթի, 21 Յուլիսի առաւօտուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Յայ Կաթողիկէ Զամայնքի Յիւսիսային Ամերիկայի Առաջնորդ Գերապայծառ Տ.

Մանուել Եպսկ. Պաթագեանի, ընկերակցութեամբ Լուս Անճելլոսի ու շրջակայից նոր նշանակեալ ժողովրդապետ Զոգշ. Տ. Գրիգոր Վրդ. Շահինեանի, փոխ ժողովրդապետ Տ. Արմենակ Վրդ. Պետրոսեանի, ինչպէս նաեւ համայնքի վարչական ներկայացուցիչներու: Զանդիպումին ներկայ եղաւ Կրօնական ժողովի ատենապետ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, իսկ աւելի ուշ՝ միացաւ Քուէյթի եւ Ծոցի երկիրներու մօտ Կաթողիկոսական փոխանորդ Բարձր. Տ. Կորիւն Արք. Պապեան, որ այս օրերուն Լուս Անճելլոս կը գտնուի:



Ողջունելով յարգելի հիւրերուն ներկայութիւնը, Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեց Զայր Գրիգորն ու Զայր Արմենակը՝ իրենց նոր պաշտօններուն ստանձնումին առիթով, մաղթելով յաջողութիւն եւ օգտաշատ ծառայութիւն համայնքին ու հայութեան:

Խորհրդակցութեան Նիւթ եղան հայութիւնը յուզող այժմեական հարցեր ու մասնաւորաբար

Արեւմտեան Միացեալ Նահանգներու հայութեան հասարակական կեանքին վերաբերող խնդիրներ: Վեր առնուեցաւ այն իրողութիւնը, որ հայութեան տարբեր յարանուանութիւնները սերտօրէն կը գործակցին իրարու հետ, հոգեւոր կեանքի թէ ազգային հարցերու կալուածներուն մէջ, եւ թէ՛ այդ գործակցութեան շարունակումն ու զարգացումը մեծապէս կը նպաստէ մեր ժողովուրդին ու ազգային հարցերու հետապնդման:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց Գերապայծառ Տ. Մանուել Եպսկ. Պաթագեանի հրաւերին համար, որ ուղղուած էր նախապէս՝ ներկայ ըլլալու յառաջիկայ Կիրակի, 25 Յուլիսին նախատեսուած Ս. Պատարագին: Արդարեւ, Զայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, նոր ժողովրդապետին ու փոխ ժողովրդապետին պաշտօնի ստանձնումին առիթով պիտի պատարագէ Գերապայծառ Տ. Մանուել Եպսկ. Պաթագեան: Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Ս. Պատարագին ներկայ պիտի ըլլան Ս. Աթոռոյս Միջ-եկեղեցական յարաբերութեանց բաժանմունքի վարիչ Գերշ. Տ. Նարեկ Եպսկ. Ալեմեզեան եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Զոգեւոր Զովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քիւնյ. Աթմաճեան:

Զանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց յարգելի հիւրերուն, միաժամանակ անոնց ընդհանուր տեղեկութիւններ տալով Ազգ. Առաջնորդարանի տարբեր բաժանմունքներուն մասին:

PRELATE WELCOMES BISHOP MANUEL BATAKIAN EPARCH OF THE ARMENIAN CATHOLIC CHURCH

On Wednesday, July 21st, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate,



welcomed to the Prelacy H.E. Bishop Manuel Batakian, Eparch of the Armenian Catholic Church, accompanied by the new Rector of the Catholic Church in Los Angeles Very Rev. Fr. Krikor Shahinian, Assistant Rector Very Rev. Fr. Armenag Bedrossian, and St. Gregory Armenian Catholic Church parish council

representatives. Joining the Prelate at the meeting was Very Rev. Fr. Muron Aznikian, and later H.E. Archbishop Goriun Babian, Catholicosal Vicar of Kuwait and the Gulf, who is in Los Angeles for a brief visit.

The Prelate first and foremost congratulated Fr. Krikor and Fr. Armenag on their new appointments, and wished them both success in their new mission.

The discussion then turned to issues regarding the Armenian community of the Western United States, and the importance of continued collaboration between the three Armenian denominations.

The Prelate thanked Bishop Batakian for a previously sent invitation to participate in Divine Liturgy on Sunday, July 25th, which he will celebrate, and during which the new Rector and Assistant Rector will be installed to their new positions. Catholicosate Ecumenical Officer H.G. Bishop Nareg Amezian and pastor of St. Mary's Church Rev. Fr. Vazken Atmajian will participate on the Prelate's behalf.

At the conclusion of the meeting the Prelate presented the guests with mementos, and also familiarized them with the departments of the Prelacy.
